

## Արձանագրություն №6/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. ապրիլի 22-ին տեղի ունեցած թիվ 6 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 74-ը (յոթանասունչորսը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց նիստի օրակարգից հանել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի շուրջ ստեղծված իրավիճակի քննարկման մասին հարցը, և հաշվի առնելով այդ հարցով գիտական խորհրդի 32 անդամների պահանջը, օրակարգային այդ հարցով ապրիլի 23-ին անցկացնել արտահերթ նիստ:

Առաջարկված փոփոխությամբ քվեարկության դրվեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. Ամբիոնի վարիչների պաշտոններում ընտրության վերաբերյալ ֆակուլտետների գիտական խորհուրդների քվեարկության արդյունքների հաստատում (զեկ.՝ ՈՄՀ նախագահ Է. Ասրիյան)
3. 2021-2022 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգերի հաստատում (զեկ.՝ պրոռեկտոր Է. Ասրիյան):
4. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյան):
5. Հաղորդում ԵՊՀ ռազմավարական ծրագրի կազմման աշխատանքների մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյան):
6. Հաղորդում մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում պիլոտային ծրագրի մեկնարկի մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյան, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակ. դեկան Ա. Սահակյան):

### Ընթացիկ հարցեր

7.1. ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում «Խորեն Պալյանի անվան» կրթաթոշակ հաստատելու մասին:

7.2. Շվեդիայի թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Հենրիկ Շահողլյանին «ԵՊՀ պատվավոր դոկտոր» պատվավոր կոչում շնորհելու մասին:

7.3. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Սամվել Մուրադյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում շնորհելու մասին:

7.4. Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնների միավորման մասին:

7.5. «Գրական արաբերենի դասընթաց. զբոսաշրջության ոլորտ» (հեղ.՝ Սոնա Տոնիկյան, Սյուզաննա Գյոզալյան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

7.6. «Արաբական գրականության պատմություն (19-20-րդ դարի առաջին կես)» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

7.7. «Մերձավոր Արևելքի երկրների բարբառներ» (հեղ.՝ Սեդրակ Յովսեփեան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը՝ առաջարկված փոփոխությամբ:

**1.Լսեցին.**- Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ՝ նշելով, որ պրոֆեսորի կոչման 5 հավակնորդից 3-ի վերաբերյալ հանձնաժողովը տվել է բացասական, իսկ դոցենտի գիտական կոչման բոլոր 7 հավակնորդների վերաբերյալ դրական եզրակացություն՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» պահանջներին համապատասխան: Պ. Վարդևանյանը ֆակուլտետների մրցութային հանձնաժողովների նախագահներին հորդորեց առավել ուշադիր ու հետևողական լինել հավակնորդների տվյալների ու փաստաթղթերի դիտարկման հարցում:

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Թոշունյան Կարեն Արմենի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ
2.	Հարությունյան Հակոբ Ժորայի	Համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Մարգարյան Արմինե Արմենի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբ. ասիստենտ
2.	Հարությունյան Տիգրան Աշոտի	Գենետիկայի և բջջաբանության ամբ. ասիստենտ
3.	Աղաջանյան Անուշ Արամայիսի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբ. ասիստենտ
4.	Ավետիսյան Մերի Բաբկենի	Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժ. ամբ. ասիստենտ
5.	Հայրապետյան Լուսինե Խաչատուրի	Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժ. ամբ. ասիստենտ
6.	Հովհաննիսյան Աշխեն Հայկի	Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ. Ասիստենտ
7.	Ազիզբեկյան Զարուհի Ռուբենի	Ռոմանական բանասիրության ամբ. ասիստենտ

Կազմակերպվեց առցանց փակ քվեարկություն: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց առցանց, փակ-գաղտնի քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Կարեն Արմենի Թոչունյան	65	2
2.	Հարությունյան Հակոբ Ժորայի	65	2

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
-----	-----------------------------	------	-----

1.	Մարգարյան Արմինե Արմենի	62	2
2.	Հարությունյան Տիգրան Աշոտի	62	2
3.	Աղաջանյան Անուշ Արամայիսի	63	1
4.	Ավետիսյան Մերի Բաբկենի	64	0
5.	Հայրապետյան Լուսինե Խաչատուրի	63	1
6.	Հովհաննիսյան Աշխեն Հայկի	63	1
7.	Ազիզբեկյան Ջարուհի Ռուբենի	64	0

**Որոշեցին** - Դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

**2.Լսեցին.** - Ամբիոնի վարիչի պաշտոնների ընտրության վերաբերյալ ֆակուլտետային գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին: Որակավորման մանդատային հանձնաժողովի նախագահ Է. Ասրիյանը ներկայացրեց ամբիոնների վարիչների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ՝ նշելով, որ համապատասխան ընթացակարգի պահանջներին անհամապատասխանության պատճառով 5 թեկնածուի վերաբերյալ հանձնաժողովը կայացրել է մերժման որոշում, իսկ մնացած թեկնածուների փաստաթղթերը դրական եզրակացությամբ ներկայացվել ռեկտորին: Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Մակարյան Ալբերտ Արշավիրի	Ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ
2.	Նավասարդյան Սյուզաննա Կարապետի	Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի վարիչ
3.	Դավթյան Պետրոս Գարուշի	Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ

4.	Սեդրակյան Անուշ Ռոստոմի	Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ
5.	Աթանեսյան Արթուր Վլադիմիրի	Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ
6.	Բարսեղյան Պարզև Աշոտի	Կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ
7.	Խաչատրյան Կառլեն Գագիկի	Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ
8.	Գրիգորյան Մարտին Գևորգի	Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ
9.	Մկրտչյան Սամվել Սուրենի	Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի վարիչ
10.	Փոլադյան Աննա Արշակի	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ
11.	Դուրգարյան Նարինե Անժելոյի	Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ
12.	Հովհաննիսյան Անահիտ Միխիթարի	Ֆարմաբիոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ
13.	Բաղայան Համլետ Գուրգենի	Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբ. վարիչի

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 74 անդամներից 67-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Մակարյան Ալբերտ Արշավիրի	61	3
2.	Նավասարդյան Սյուզաննա Կարապետի	61	3
3.	Դավթյան Պետրոս Գարուշի	64	0
4.	Սեդրակյան Անուշ Ռոստոմի	57	7
5.	Աթանեսյան Արթուր Վլադիմիրի	63	1
6.	Բարսեղյան Պարզև Աշոտի	64	0
7.	Խաչատրյան Կառլեն Գագիկի	59	5
8.	Գրիգորյան Մարտին Գևորգի	63	1

9.	Մկրտչյան Սամվել Սուրենի	64	0
10.	Փոլադյան Աննա Արշակի	63	1
11.	Դուրգարյան Նարինե Անժելոյի	64	3
12.	Հովհաննիսյան Անահիտ Մխիթարի	66	1
13.	Բադալյան Համլետ Գուրգենի	61	6

**Որոշեցին.** - Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գիտական խորհուրդների որոշումները, և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

**3.Լսեցին.-** 2021-2022 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգերի հաստատման մասին: Պրոռեկտոր Է. Ասրիյանը նշեց, որ 1-ին և 2-րդ փուլերի ընդունելության փաստաթղթերի ներկայացումն իրականացվելու է առցանց եղանակով, ինչը հաջողությամբ կիրառվել է նաև նախորդ ուսումնական տարում: Ըստ ներկայացված կարգերի՝ առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլի փաստաթղթերն ընդունվելու են առցանց եղանակով՝ ընթացիկ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա հուլիսի 5-ին և 6-ին, իսկ անվճար և վճարովի ուսուցման տեղերի համար մրցույթի արդյունքներն ամփոփվելու են ընթացիկ տարվա հուլիսի 8-ին: Մագիստրատուրայի ընդունելության երկրորդ փուլի փաստաթղթերն ընդունվելու են ընթացիկ տարվա հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 20-ը: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա օգոստոսի 26-ին և 27-ին: Հեռակա ուսուցման ձևով 2021-2022 ուսումնական տարվա համար մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվելու են ընթացիկ տարվա սեպտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 8-ը: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա հոկտեմբերի 13-ին և 14-ին: Է. Ասրիյանը նկատեց, որ ներկայացված կարգերում փոփոխություններն ու շտկումները համաձայնեցվել են ֆակուլտետների հետ, հաշվի առնվել մասնագիտությունների առանձնահատկությունները:

**Որոշեցին.** – Հաստատել՝

1. «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա ուսուցման ձևով) 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը»՝ համաձայն հավելվածի,
2. «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (հեռակա ուսուցման ձևով) 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը»՝ համաձայն հավելվածի:

**4.Լսեցին.-** Մագիստրոսի նոր կրթական ծրագրերի մասին: Որակի ապահովման մշտական հանձնաժողովի նախագահ Է. Գևորգյանը ներկայացրեց, որ հանձնաժողովը քննարկել է 4 ֆակուլտետներից ներկայացված 8 մագիստրոսական նոր ծրագրեր՝ «Կիրառական քաղաքագիտություն» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ), «Ամերիկագիտություն» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ), «Ազգային անվտանգություն» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ), «Ընտանիքի հոգեբանություն» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ), «Բարոյագիտություն» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ), «Դեղերի որակի վերահսկում» (Ֆարմացիայի ինստիտուտ), «Կլինիկական դեղագիտություն» (Ֆարմացիայի ինստիտուտ), «Էլեկտրադինամիկական պրոցեսների համակարգչային մոդելավորում և նմանակում» (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ): Է. Գևորգյանը նշեց, որ բոլոր ներկայացված ծրագրերն անցել են անհրաժեշտ ողջ ընթացակարգերը, ներքին ու արտաքին փորձաքննությունը, ստացել ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի դրական եզրակացությունը: Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը հետաքրքրվեց նոր ծրագրերի ընդունելության մեկնարկի և փակված մագիստրոսական ծրագրերի մասին, ինչին ի պատասխան Է. Գևորգյանը նշեց, որ նոր հաստատվելիք ծրագրերը մեկնարկելու են 2021-2022 ուսումնական տարվա սկզբից: Պրոռեկտոր Է. Ասրիյանը նշեց, որ յուրքանչյուր նոր կրթական ծրագրի լիցենզավորման համար անհրաժեշտ է ներկայացնել ԵՊՀ-ում առկա լսարանային և գրադարանային ողջ ռեսուրսը, և այդ հարցում առկա են խնդիրներ: Ներկայումս ԵՊՀ-ում գործում է 132 կրթական ծրագիր, նոր ծրագիր բացելու համար չեն բավականացնում լսարանային ֆոնդերը և այդ պատճառով շրջաբերական էր ուղարկվել ֆակուլտետներ՝ հավաքագրելու արդեն իսկ չիրականացվող և հետագայում էլ չիրականացվելիք կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը, որն ուղարկվել է լիազոր մարմին՝ դրանց լիցենզիան դադարեցնելու համար: Այս պահին լսարանային ռեսուրսի խնդիր կա և նոր կրթական ծրագրերի համար լիցենզիան դժվարությամբ է տրամադրվում: Ե. Միրզոյանը նկատեց, որ հետագայում ծրագրային հավատարմագրման դեպքում ԵՊՀ-ի համար լրացուցիչ խնդիրներ կառաջանան՝ Բարձրագույն կրթության ու գիտության մասին նոր օրենքի ընդունման պարագայում: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն ի լրումն նշեց, որ ծրագրային հավատարմագրման գաղափարն այն է, որ նոր ծրագիր բացելն ավելի հաշվարկված լինի: Տարիներ շարունակ ԵՊՀ-ում գործում է այն մոտեցումը, որ անկախ հաստատված ծրագրերի քանակից խմբերը բացվում են փաստացի հավաքված ուսանողների պարագայում:

**Որոշեցին.-** Հաստատել ԵՊՀ մագիստրոսի ներքոնշյալ կրթական ծրագրերը՝

1. «Կիրառական քաղաքագիտություն» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)

2. «Ամերիկագիտություն» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
3. «Ազգային անվտանգություն» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
4. «Ընտանիքի հոգեբանություն» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
5. «Բարոյագիտություն» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
6. «Դեղերի որակի վերահսկում» (Ֆարմացիայի ինստիտուտ)
7. «Կլինիկական դեղագիտություն» (Ֆարմացիայի ինստիտուտ)
8. «Էլեկտրադինամիկական պրոցեսների համակարգչային մոդելավորում և նմանակում» (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)

**5.Լսեցին.-** Հաղորդում ԵՊՀ ռազմավարական ծրագրի կազմման աշխատանքների մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ 3 ամիս է աշխատանքային 3 խմբերում ընթանում են ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կազմման աշխատանքները և չնայած համավարակի հարուցած խնդիրներին՝ արդեն պատրաստ է ռազմավարական պլանը: Առաջիկայում նախատեսվում է գլխադասային հանձնաժողովի նիստի հրավիրում, որտեղ ծրագրի ամբողջական քննարկումից հետո դիտարկումներ և առաջարկություններ ստանալու նպատակով այն կուղարկվի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներ: Ստացված առաջարկների ու նկատառումների քննարկումից հետո, ամենայն հավանականությամբ, ծրագիրը կներկայացվի գիտական խորհրդի հաստատմանը:

**Որոշեցին.** -ԵՊՀ ռազմավարական ծրագրի կազմման աշխատանքների մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

**6.Լսեցին.-** Հաղորդում մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում պիլոտային ծրագրի մեկնարկի մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ բոլոր ֆակուլտետներում միննույն ձևով ուսուցումը, կրթական գործընթացի կազմակերպումն արդյունավետ չէ և եթե ինչ-որ բան կարող է նպաստել ուսուցման որակի բարձրացմանը, ապա անհրաժեշտ է այդ ուղղությամբ քայլեր իրականացնել, նորամուծություններ կատարել, ուստի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ներդրվող պիլոտային ծրագիրը միտված է դրան: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Սահակյանը, մանրամասն ներկայացնելով պիլոտային ծրագրի էությունը, նշեց, որ նախատեսվում է որոշ դասընթացներում ներմուծել գնահատվող ինքնուրույն աշխատանք, որը ներդրվում է միայն եզրափակիչ գնահատումով դասընթացներում: Դասախոսը կիսամյակի ընթացքում ուսանողին հանձնարարում է 8 գրավոր ինքնուրույն աշխատանք, ստուգում և գնահատում դրանք, ինչի հիման վրա ուսանողը կարող է եզրափակիչ քննության 10 միավորից վաստակել առավելագույնը 3 միավոր: Եզրափակիչ քննության ժամանակ ուսանողը կարող է վաստակել առավելագույնը 7 միավոր: Արդյունքում՝ կիսամյակի ընթացքում 2 ընթացիկից և ինքնուրույն



աշխատանքից 0 միավոր հավաքած ուսանողը զրկվում է դրական արդյունարար գնահատականից և պարտավոր է կրկնել դասընթացը: Այսինքն՝ առանց այդ աշխատանքների կատարման ուսանողը չի կարող ապահովել եզրափակիչ գնահատականի դրական միավորը: Ըստ նրա՝ ֆակուլտետում լուրջ խնդիր է ուսանողի կիսամյակային ակտիվությունը, իսկ ներդրվող գնահատման ձևը կիսթանի այդ: Արդարացի չէ, որ կիսամյակի ընթացքում ակտիվություն չցուցաբերած, որևէ աշխատանք չկատարած ուսանողը լուծարքային շրջանում կարողանում է ապահովել իր դրական միավորը: Պրոռեկտոր Է. Ասրիյանը հավելեց, որ պիլոտային ծրագրին միանում է նաև Ժուռնալիստիկայի ֆակուլտետը և, բացի այդ, հաստատվելիք ԵՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագրում առկա է գնահատման բազմազանեցմանը միտված գործողություն, և վերոնշյալ պիլոտային ծրագիրը կարող է գնահատման բազմազանեցման առումով վերլուծության հսկայական նյութ տալ:

**Որոշեցին.** – Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում հաստատել ներկայացված պիլոտային ծրագրի ներդրումը:

**7.Լսեցին.**– ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում Խորեն Պալյանի անվան կրթաթոշակ սահմանելու մասին: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ ներկայացվող կրթաթոշակի ֆինանսավորումն իրականացվելու է Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի կողմից:

**Որոշեցին.**– Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետում 2021/2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սահմանել Խորեն Պալյանի անվան կրթաթոշակ:

**8.Լսեցին.**– Հենրիկ Շահողույանին «ԵՊՀ պատվավոր դոկտոր» պատվավոր կոչում շնորհելու մասին: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը ներկայացրեց, որ առաջարկը ստացվել է մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետից: Հ. Շահողույանը 1990-ականների վերջերից շատ ակտիվ համագործակցում է ֆակուլտետի և հայաստանյան մաթեմատիկոսների հետ: ԵՊՀ 4 շրջանավարտ պաշտպանել է ատենախոսություն վերջինիս ղեկավարությամբ, 11 հայ մաթեմատիկոսների հետ ունի ավելի քան 30 գիտական աշխատանք, ավելի քան 100 գիտական հոդվածների հեղինակ է: Հայաստանում կազմակերպել է 4 միջազգային գիտաժողով, նրա միջոցով հայ մաթեմատիկոսները կապեր են հաստատել արտասահմանյան հայտնի գիտնականների հետ: Գրեթե ամեն տարի լինում է Հայաստանում, վարում գիտական սեմինարներ, դասախոսություններ և այլն: Նա նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է:

**Որոշեցին.**– Շվեդիայի թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Հենրիկ Շահողույանին շնորհել «ԵՊՀ պատվավոր դոկտոր» պատվավոր կոչում:

**9.Լսեցին.-** Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Սամվել Մուրադյանին «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչում շնորհելու մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը ներկայացրեց, որ պրոֆեսոր Մուրադյանը ավելի քան 20 տարի եղել է Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, այս տարի լրացել է պաշտոնավարման ժամկետը և չի դիմել մրցույթին մասնակցության համար: Ուստի, որպես ճանաչված գրականագետ, շատ արդյունավետ ու բեղուն գիտամանկավարժական գործունեություն ծավալած համալսարանական՝ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը միջնորդել է շնորհել պատվավոր կոչումը:

**Որոշեցին.-** Ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Սամվել Պարզի Մուրադյանին շնորհել «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչում:

**10.Լսեցին.-** Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնների միավորման մասին: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը նշեց, որ այդ երկու ամբիոններում ծանրաբեռնվածությունները բավական քիչ են, և աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար առաջարկվում է միավորել ամբիոնները և միավորված ամբիոնը վերանվանել «Ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոն»:

**Որոշեցին.-** Զուլման եղանակով վերակազմավորել ԵՊՀ Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոնները և անվանել «Ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների ամբիոն»:

**11.Լսեցին.-** «Գրական արաբերենի դասընթաց. զբոսաշրջության ոլորտ» (հեղ.՝ Սոնա Տոնիկյան, Սյուզաննա Գյոզալյան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին հարցը:

**Որոշեցին.-** «Գրական արաբերենի դասընթաց. զբոսաշրջության ոլորտ» (հեղ.՝ Սոնա Տոնիկյան, Սյուզաննա Գյոզալյան) աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

**12.Լսեցին.-** «Արաբական գրականության պատմություն (19-20-րդ դարի առաջին կես)» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին հարցը:

**Որոշեցին.-** «Արաբական գրականության պատմություն (19-20-րդ դարի առաջին կես)» աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

**13.Լսեցին.**- «Մերձավոր Արևելքի երկրների բարբառներ» (հեղ.՝ Սեդրակ Յովսեփեան) աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին հարցը:

**Որոշեցին.**- «Մերձավոր Արևելքի երկրների բարբառներ» (հեղ.՝ Սեդրակ Յովսեփեան) աշխատանքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

27.04.2021թ.